Գերազգիւոյ Հօր տեառն տեառն
Մխիթարայ Աբրայի

...Ներ հոկտեմբերին խռովութիւն մեծ անկաւ ի մէջ խաչատուր վարդապետին և տէր Ստեփանին։ Պատճառն է, զի մուրկակ չարախօսութեան ուեալ են ի սանթուֆիցն հինգ փունթով ի վերայ կարգաւորացն արեւելականաց, թէ փոփոխեալք են զսովորական արարողութիւնս եկեղեցւոյն իւրեանց, մանաւանդ ի պատարագն։ Գիրն տուաւ Սաքրիսանդին, և նա խաչատուր վարդապետին, զի ցուցցէ կարգաւորացն և գրեսցէ զպատասխանս։ Գրեաց նա զպատասխանն և տարեալ եղոյց կարտինալին, որ ասաց. Լաւ է, բայց պիտոյ է զի ստորագրիցին եպիսկոպոսք և քահանայք գտեցեալքն ի Հռոմ։ Եւ նորա առեալ զգիրն մինչ դարձաւ ի ժամն, էգիտ զտէր Ստեփանն, որ եկեալ էր ի եայլայէն։ Պատմեալ նմա զիրն և ցուցեալ զգիրն՝ ասացեալ էր թէ պարտի ստորագրել։ Եւ նա ձգեալ էր առ վաղիւն։ Եւ ի վաղիւն ընդ առաջադրելն լաւ թէ ինչ կարտորաս, կամաց կամաց։ Միւսն ևս զայրացեալ ելանէ առ Վրդանէս եպիսկոպոսն, զի ասցէ նմա ստորագրել. ևս նա հրաժարեալ է ի ստորագրելոյն, թէ ստութեան ես ոչ վկայիմ, զի ներ հայոց ոչ գոյ թիւ պատարագ։ Ընդ բոլբոքիլն լուեալ է ի տէր Ստեփանէն զնախատինս ոչ թեթեւս։ Գնաց առ կարտինալն և ասաց, թէ են ոմանք, որք ոչ կամին ստորագրել. և նա հրամայեալ էր առաջադրել ամենեցուն, զի ծանիցէ թէ ովք իցեն ստորագրողքն և ոչ կամեցողքն։ Նա մինչ առեալ զթուխտն և դարձաւ, Վրդանէս եպիսկոպոսն, տէր Ստեփանն և տէր Պազտասարն գնացին առ կարտինալն տալ զպատասխան թղթոց գրի և զանկատեալք զնմանէ թէ ամենայնում իրի ներ խառնէ զինքն, և գփոքր իրն մեծացուցանէ աղազակաւ, միթէ ոչ գտանի ոք՝ որ պատասխանիցէր առաւել բարեպէս։...

Գերազգիւութեան քոյոյ նուաստ ծառայ

գրեցաւ 1725 Նոյեմբերի *Յօնան Եպս. Սեպաստիոյ*
Ի սուրբ Ինոֆրին

(Շարունակելի) Հ. Գ. Տաշեան

Ա Զ Դ

Կը խնդրուի մեր այն բաժանորդներէն՝ որոնք ցարդ չեն վճարած իրենց տարեկան բաժնեգինը՝ փութալ հասցնել խմբագրութեանս։ Տարեկան բաժնեգին ֆր. գաղ. 25. տոլ 5։

Խմբագրութիւնս պատասխանատու չէ որևէ կորուստի՝ յետ կարևոր եղած խնամքով առաքումները կանոնաւորապէս կատարելու։

Հասցէի որևէ փոփոխութիւն՝ հարկ է կանխապէս հաղորդել խմբագրութեանս։

Ցանձնարարեալ (Recommandé) թղթերով ստանալ փափագողք պէտք է յաւելուն բաժնեգնոյն վրայ ֆր. գաղ. 1։

digitised by A.R.A.N.